գործոյն տամք բերել յՆրուսաղէմէ եւ հատուցանեմք, միայն Քեահեայ Պէյն աշխատ լիցի 'ի գլուխ տանել ըզգործն, մեկնեցան Վարդապետքն 'ի վանս, և Ցարութիւնն 'ի Պօլ.։

ԳԼՈՒԽ ԼԱ.

Վիճաբանութիւն Վարդապետաց ընդ Քեահեայ Պէյին վասն դրամոց։ Դարձեալ վէճ եւ պահանջ Քեահեային վասն Բեթղեհէմի և Աստուածածնի։ Գրեանք Կուսակալին 'ի պաշտպանութիւն Ցունաց։ Զգենուլ Վարդապետաց սամուրէնի և տալ մուրհակ պարտուց։

Ի ՎԱՂԻՒ անդր մինչ երթային Վարդապետքն առ Քեահեայ Պէյն, զինուորաց գտեալ զնոսա 'ի ճանապարհի փութացուցանէին, որպէս թէ զայրացեալ իցէ նորա. իբրեւ յանդիման եղեն՝ խոժոռեալ Քեահեային ասէ՝ ո՞ւր էք զի ոչ երեւիք, ընդէ՞ր ոչ հոգայք զգործն ձեր, եւ ո՞ւր է բերեալ դրամն. նոքա ասեն՝ դրամ ոչ ունիմք ընդ մեզ, կատարեցէք զգործն, խոստանամք և տամք մուրհակս, զի այս է պատուէր ծերունեաց, և նոքա հատուցանեն։ Ասէ, զի՞նչ ունիք տալ, ասեն 400 քսակս արծաթոյ։ Եւ նորա լցեալ բարկութեամբ ասէ, խաղալիք են գործք ձեր, զի միայն վասն գործոց կատարելոց յաւուրս Խօճաքեանին խոստացայք 'ի ձեռն Մէհէմմէտ Պէյի տալ միայն Կուսակալին 500 քսակս, այժմ զի՞նչ տայք վասն կատարման այլոց խնդրոց ձերոց. նոքա ասեն՝ ոչ այդպէս, զի սակարկութիւնն այն մնաց 5—և 400 քսակի, և այն զկնի կատարելապէս վերջ տալոյ գործոյն, եւ այժմ եկեալ յոտս ձեր աղաչեմք ջնջուաղեցուցանել զգումարն զայն. զի ծերունիք յուսացեալ 'ի գթութիւնս ձեր առաքեցին զմեզ, և խնդրեմք չառնել զմեզ ամօթապարտ. և նա ասէ՝ վասն այնորիկ փութամ զի կատարեսցի գործն և դուք խնդութեամբ դարձջիք 'ի տեղիս ձեր։

Եւ իբրեւ աղերս արկեալ աղաչէին զնա՝ ասէ, ոչ այնչափ աղաչանք և պաղատանք օգնել ինչ կարեն, որչափ դրամն, 'ի կարի թախանձել եւ 'ի ժտելն, ասէ՝ զի՞նչ*